




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԼԿՅ՝ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ԽՖԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 7

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

□ □ □



Հ. Խ. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926

242-3

h-84

35
101 MAR 2010
05 FEB 2007

ԼԿՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ

№ 7 ԲԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 7

PH

38978

391

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ



Հ. Խ. Ս. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

11 3 .05. 2013

35. 115

Գրառեպլար № 869բ. № 463. Տիրած 4000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում - 349.



4016 - 821

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿ- ՏԱՏՈՒՐԱՆ.

Բաճվեց գասակար- Սորհրդային իշխանու-
գը հեղափոխության թյունը — պրոլետարիատի
դեկավարն է գիկտատուրան է, բանվոր
գասակարգի անսանձան իշխանությունը: Մեր
յերկիրը դեկավարում է բանվոր գասակարգը,
իր ավանգարդ — կոմունիստական կուսակցու-
թյան միջոցով: Մեզ մոտ շահագործող գասա-
կարգերը զրկված են քաղաքական վորեն իրա-
վունքներից: Բոլոր նրանք, ովքեր անաշխատ
յեկամուտով են ապրում, ընտրական իրավունք-
ներով չեն ոգտվում: Բանվոր գասակարգի շա-
հերին են ծառայում մամուլը, դւրոցը, բանա-
կը — ամբողջ պետական ապարատը: Սահմանա-
դրությունը բանվոր գասակարգին տալիս է հա-
տուկ ընտրական իրավունքներ, վորն ամրա-
ցնում է պրոլետարիատի դեկավար դերը Սոր-
հուրդներում: Յերկրում գոյություն ունի միայն
բանվոր գասակարգի կուսակցությունը — կոմու-
նիստական կուսակցությունը:

Ինչո՞ւ պետք է ղեկավարի բանվոր դասակարգը: Վորովհետև պրոլետարիատը մեր հասարակության առաջավոր դասակարգն է: Կապիտալի դեմ մղած ամբողջ պայքարի ընթացքում, միայն պրոլետարիատն է պատրաստվել հեղափոխության մեջ ղեկավար դեր ստանձնելու համար:

«Այն ժամանակ, յերբ բուրժուազիան ցրվում, բաժան-բաժան էր անում գյուղացիությանը և բոլոր մանր-բուրժուական խավերին, նա համախմբում, միացնում, կազմակերպում է պրոլետարիատին» (Լենին):

Կապիտալիստական գործարաններում բանվորները հավաքվել էյին հազարներով. այստեղ բանվորներին միացնում, համախմբում էյին գոյության միանման պայմանները: Բոլոր բանվորների զիմաց կանգնած էր չափափառ: Բանվորների մեջ զարգանում է համերաշխության զգացմունքը՝ բոլոր շահագործվողների շահերի ընդհանուր լինելու գաղափարը: Աճում և ամրանում է այն պիտակցությունը, թե շահագործվողների միայն բոլոր ուժերի կազմակերպման միջոցով կարելի է լինի հաղթանակել բուրժուազիային:

Ցարալսա ռեժիմի դաժան պայմաններում բանվոր դասակարգը ստեղծել է իր ուժեղ կու-

սակցական կազմակերպությունը՝ պայքարի բայց-շեվիկյան շտաբը: Բանվորն անցել է մասսայական գործադուլների, ցույցերի և զինված ապստամբությունների բովով: Բանվորը միշտ հեղափոխական պայքարի ընդձեռնողն է հանդիսացել, նա դիմադրել է թշնամու կատաղի հարձակումներին, իսկ պարտությունից հետո՝ կրել նրա ամենասոսկալի հետևանքները:

Իր ավանգարդ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, բանվոր դասակարգը 1917 թվին տապալեց բուրժուազիային: Բանվոր դասակարգի ղեկավարությամբ աշխատավորները հաղթող դուրս յեկան բաղադրացիական կուլում, իսկ նրանից հետո — մի շարք խոշոր նվաճումներ ձեռք բերին անտեսական շինարարության ճակատներում:

Բանվորների յեվ Բայց բանվոր դասակարգային գաղափարների զարգացումը չէր կարող հաղթանակել առանց գյուղացիական մասսաների աջակցության: Գյուղացիությունը — բնակչության ճնշող մեծամասնությունն է և գյուղացիության հետ միասին պրոլետարիատը կարողացավ տապալել բուրժուազիային:

Ցարիզմի ժամանակ գյուղացիությունը պակաս չէր շահագործվում կալվածատերերի կող-

միջ: Բայց իր ազատագրական պայքարում նա բռնվորի նման միահամուռ և վճռապես չեր ըմբոստանում: Խնչո՞վ բացատրել այդ:

Մենք վերը հիշեցինք Լենինի խոսքերը, վոր կապիտալիզմը բաժան-բաժան է անում գյուղացիությանը:

«Գյուղացիները միացված չեն խոշոր ձեռնարկություններում, այլ բաժան-բաժան, մեկուսացված տնտեսաառնությունն են անում:

Գյուղացիներն իրենց հանգեալ չեն տեսնում միասնական թշնամուն այնպես բաց, պարզ, ինչպես բանվորները—կապիտալիստներին:

Ահա ինչու գյուղացիական չքավորության ամբողջ մասսան և բոլոր յերկրներում, ազատության համար մղած պայքարում ավելի անկայուն է հանդիսացել, քան բանվորները» (Լենին):

1905 թվին հեղափոխությունը պարտություն է կրել նրա համար, վոր գյուղացիությունն անհրաժեշտ չափով չի աջակցել բանվորներին: 1917 թվին գյուղացիությունը հաշվի չէ առել նախկին պայքարի դասերը: Նա հատուա՞տ գնացել է բանվոր դասակարգի հետևից, փոտոհեղու՞մ նրա ղեկավարությունը: Այդպիսով Խեղձվել է բանվորների ու գյուղացիների ուժերը միությունը, վորը և հանդիսացել է հե-

ղափոխության հաղթանակի ամենահուսալի յերաշխիքը:

Պրոլետարիատի դիկտատուրան, Խորհրդային իշխանությունը—պրոլետարիատի և գյուղացիության դասակարգային միությունն է, վորտեղ ղեկավարությունը պատկանում է բանվոր դասակարգին:

Խորհրդային ԽՍՀՄ-ում տուրան նպատակ ունի կատարել ռախագործողների ուղեկու սոցիալիստական գիմագրությունը. հասարակարգ: Մենք տես-

նում ենք, վոր մեր յերկրի բանվոր դասակարգը զբաղված է սոցիալիստական շինարարության լարված աշխատանքով: Այդ շինարարությունն ապահովելու համար, բանվոր դասակարգը պետք է հաստատ և վճռական կերպով ճնշի շահագործողների ամեն մի դիմադրություն:

Տապալված շահագործող դասակարգերը կատաղի դեմադրություն են ցույց տալիս Խորհրդային իշխանության:

Դրանում մենք համոզվում ենք մեր հեղափոխության որինակով: Մեզ մոտ յերեք Խորհրդային շարունակվում էր քաղաքացիական պատերազմը: Մեր կապիտալիստներն ու կալվածատերերը հակայական ոժանդակություն ստանալով միջադ-

դաշին բուրժուազիայից, զենքը ձեռքին փորձում ելին վերականգնել հին կարգերը:

Վրչ մի յերաշխիք չկա, վոր նման փորձեր չեն կրկնվելու: Միջազգային բուրժուազիայի կողմից մեզ վրա զինված հարձակում գործելու վտանգն ու հնարավորութիւնները չեն վերացված: Զինված պայքարից բացի, կապիտալիստական պետութիւնները և մեր յերկրի բուրժուական տարրերը գործադրում են պայքարի մի շարք այլ միջոցներ—խանգարում են խորհրդային ու տնտեսական շինարարութիւն աշխատանքներին, պրոլետարիատին թշնամի գաղափարներ են տարածում և այլն:

Իր իշխանութիւնը, իր գիկտատուրան բանվոր դասակարգն ոգտագործում է ճնշելու համար պրոլետարական հեղափոխութիւն ղեկ ուղղված ամեն մի գիմադրութիւն:

Պրոլետարիատի գիկ- Բանվոր դասակարգը սո-
սառուրան վերագա- ցիալիզմը կարող է կառու-
սիաբակում է աշխա- ցել միայն գյուղացիական
սովորական մասնա- լայն մասսաների հետ միա-
ճեթն: սին:

Մենք վերևում հիշեցինք Լենինի խոսքերն այն մասին, վոր գյուղացիական չքավորութիւնը սոցիալիզմի համար մղած պայքարում ավելի անկայուն է, քան բանվորութիւնը: Դա հետե-

վանք է նրան, վոր գյուղացին աշխատում է մեկուսացած, մանր տնտեսութիւն մեջ: Գյուղացին աշխատում է հողագործութիւնը, այդ հանգամանքը մոտեցնում է նրան բանվոր դասակարգին: Սակայն գյուղացին միաժամանակ հանդիսանում է մանր սեփականատեր, վորը և մոտեցնում է նրան բուրժուազիային: Հենց այդ կացութիւն ծնունդ է գյուղացու տատանվող, անկայուն վիճակը: Իշխանութիւն գլուխ անցած բանվոր դասակարգն իր առաջ խնդիր է դնում գյուղացիական մասսային դարձնել սոցիալիզմի կայուն ու հաստատ կառուցողներ:

Պրոլետարիատը ղեկավարում է գյուղացիութիւնը: Նշանակում է, բանվոր դասակարգը վերադաստիարակում է աշխատավոր գյուղացուն:

Իր տնտեսական քաղաքականութիւնը, բանվոր դասակարգը ձգտում է վերակերտել գյուղացիական տնտեսութիւնը: Նախորդ զրույցներում (1-ին, 5-րդ և 6-րդ) մենք տեսանք, թե ինչպէս նոր տնտեսական քաղաքականութիւնը վերակերտում և վերակառուցում է գյուղացիական մանր տնտեսութիւնը: Մենք համոզվեցեք, վոր արդյունաբերութիւն ղեկավարութիւնը, գյուղացու մեկուսացած, մանր տնտեսութիւնը պիտի խոշորանա, պիտի զարգանա կոլլեկտիվիզացիայի յենթարկվելու ուղղութիւնը:

Քանզոր զասակարգը ձգտում ե խորհրդա-
լին շինարարության մեջ քաշել գլուղացիակ սն
մասցաներին.

Պորհրդալին կարգերի մասին Լենինն ասել է.

«Նրանք իրենք, այդ մասսաներն, իրենց սիրական ձեռքն են վերցնում քաղաքականութունը, այսինքն՝ նոր հասարակարգի շինարարության գործը»: Խորհուրդները աշխատանքի հաջողութիւնը կախված է աշխատավորության ցույց տված (գործունյա) մասնակցության չափից: Խորհրդային պետության շինարարության մեջ էն քաշվում նրանք, վորոնք «կապիտալիզմի որոր ամենից շատ են հալածվել» (Լենին):

Պաշտօնական ճանապարհներով մանր-սեփականա-
տիք դուրսացին մասնակից ե արվում խորհր-
դային պետութւան շինարարության գործին: Յեւ
վորքան գյուղացին մեծ չափով լծվի խորհրդա-
յին շինարարության, այնքան ավելի կը հեշտա-
նա նրա վերադաստիարակման գործը, այնքան
ավելի նա շուտ կազատագրվի իր մանր սեփա-
կանատիրական ստայնությունից: Սակայն իհա-
րկե, չպետք ե կարծել, վոր գյուղացին կարճ
ժամանակամիջոցում կը վերադաստիարակվի:
Ինչպէս գյուղացու տնտեսության վերակերտման,
այնպէս ել նրա՝ մանր-սեփականատիրական հո-

ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՂԹՏԱՐԺԱՆ ՏԱՍԱՐ ԱԳԱՆՈՒՅ՝
ՎՈՒՄ ԵՆ ԴԱՍ ՄԵԾ ԶԱՆԵՐԻ:

Խորհուրդներն զե
կազմաւում ե կոմու-
նիստական կուսակ-
ցութիւնը

Քաղաքացիներն իշխանութիւն-
նը աշխատում ե բանվոր դու-
սակաւորի կուսակցութիւն՝
կոմունիստական կուսակցու-
թիւն ղեկավարութիւնը:

«Դիկտատուրան, — ասում է Լենինը, — կենսա-
գործում է խորհուրդներում կազմակերպված
պրոլետարիատը, վորին ղեկավարում է Կոմունիս-
տական կուսակցությունը»:

Հեղափոխության մեջ բանվոր դասակարգը իր ղեկավարութիւնը կենսագործում ե իր կուսակցության միջոցով: Իսկ կուսակցության մեջ մտնում են բանվոր դասակարգի առաջավոր ատարները, ավելի կոփված և ավելի կայուն մարտիկները: Կուսակցության միասնական ուժեղ ղեկավարության շնորհիվ աճել ու ամրացել ե Խորհրդային իշխանութիւնը: Կուսակցության ղեկավարութեամբ Խորհրդային իշխանութիւնը ջախջախել ե հակահեղափոխական զինված ապստամբութիւնը Կուսակցության ղեկավարութեամբ Խորհրդային իշխանութիւնը ներկայումս ծախսւում ե յերկրի տնտեսական շիանարարութեւնը: Կուսակցության ղեկավարութեամբ մեր յերկիրը

յետ կը մղի իր արտաքին թշնամիների վտանձը-
գությունները:

Ահա ինչու պրոլետարական դիկտատուրայի
առթիվ մղած մարտը պայքարի համար, պրոլե-
տարական դիկտատուրայի ամրացման ու պահ-
պանման համար Լենինն ասում է, թե «առանց
պայքարում կոփված յերկաթե կուսակցության...
այդ պայքարը հաջող վարելն անհնար է»:

Այդ հիման վրա, արդյոք կարելի՞ չե ասել,
թե մեզ մոտ կուսակցության դիկտատուրա չե:
Վոչ, չի կարելի: Դիկտատուրա նշանակում է բռն-
ություն վրա հենված իշխանություն: Մի՞թե
կարելի չե ասել, վոր կուսակցությունը պրոլե-
տարիատի նկատմամբ անսահման իշխանություն
ունի: Իհարկե, վոչ: Կուսակցությունը կազմում
է բանվոր դասակարգի միայն փոքրամասնու-
թյունը: Կուսակցության ուժը կայանում է նրա-
նում, վոր բանվորական լայն մասսաները վստա-
հում են կուսակցության: Կուսակցությունը բռն-
ություն չի դիմում. բանվոր դասակարգը վրա-
տահում է իր ավանգարդ Կոմունիստական կու-
սակցությանը, զիտակցում է, վոր կուսակցու-
թյան ղեկավարությունը բանվոր դասակարգին
վերջնական հաղթանակի կը հասցնի:

Խոհեղայի՞ն պետու- Մեր պետական ապարատը
րու՞նք բանվորական է ունի դեռ շատ և շատ պա-

կասություններ: Ամեն ոք, թերթերում մենք
կը տեսնենք բյուրոկրատիզմի, գործին ձևական
վերաբերմունք ցույց տալու աղաղակող լեռնույթ-
ներ: Հաճախ այդ պակասությունները միանգա-
մայն խեղաթյուրում են կուսակցության բաղա-
քականությունը:

Այդ պակասությունների պատճառներն ա-
մենից առաջ կայանում է նրանում, վոր բան-
վոր դասակարգը կազմում է բնակչության փոք-
րամասնությունը: Մեծ մասամբ, մեր պեռա-
կան հիմնարկություններում աշխատում են
բնակչության վոչ պրոլետարական խավերի ներ-
կայացուցիչները: Բանվոր դասակարգն իշխանու-
թյունն իր ձեռքն է վերցրել պետական ապա-
րատի կառավարման վերջ չունենալով, բանվոր
դասակարգը առաջին անգամն է կառուցում իր պե-
տությունը: Պակասություններն ու սխալներն
անխուսափելի չեն: Պետական ապարատի բացա-
սական չեքեույթները դեմ բանվոր դասակարգը
վճռական պայքար է մղում:

Մեր թշնամիներն ուռցնում են այդ սա-
կասությունները և աղաղակում, թե մեր պետու-
թյունը վոչ պրոլետարական է: Բայց յուրաքան-
չյուր բանվոր հասկանում է, վոր առանձին պա-
կասությունները բնավ չեն փոխում մեր պետու-
թյան պրոլետարական բնույթը: Այդ ալդպես է:

Զնայած գոյութիւնն ունեցող առանձին պակասութիւններին-ամբողջ աշխարհի պրոլետարիատի աչքի առաջ—ծավալվում է մեր յերկրի հոյակապ սոցիալիստական շինարարութիւնը:

ԽՈՐՀՐԻԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Ո՞վ չե՞վ Ի՞նչպէս է Խորհուրդներում ընտրվելու և ընտրելու իրավունքով ոգևորում են բոլոր նրանք, ովքեր իրենց գոյութիւնն համար ժիջոցներ են հայթայթում: Զեն ընտրում և չեն կարող ընտրվել այն անձնավորութիւնները, վորոնք շահույթ ստանալու նպատակով դիմում են վարձու աշխատանքի և նրանք, ովքեր ապրում են անաշխատ յեկամուտներով:

Բանվորների և գյուղացիների ներկայացուցչական նորմաների մեջ տարբերութիւնն կա: Որինակ, քաղաքային խորհուրդը, վորտեղ գերակշռում են բանվորները, — խորհուրդների գալուստային համագումարին ուղարկում են 200 ընտրողներից մի ներկայացուցիչ, նահանգային համագումարին՝ 2 հազար ընտրողներից—մի ներկայացուցիչ: Իսկ գյուղական խորհուրդը, խորհուրդների գալուստային համագումարին ուղարկում է 1000 ընտրողներից մի ներկայացուցիչ, նա-

հանգական համագումարին՝ 10,000 ընտրողներից մի ներկայացուցիչ: Դրանով իսկ Խորհրդային պետութիւնն մեջ ամբացվում է պրոլետարիատի դեկավար դերը:

Մեզ մոտ բանվոր դասակարգը համեմատաբար փոքրաքանակ է, իսկ պրոլետարական դիկտատուրայի ամբողջիւն համար պահանջվում է, վորպեսզի հեղափոխութիւնը ղեկավարող դասակարգը, հնարավորութիւնն սահմաններում լայն չափով ներկայացվի խորհուրդներում: Դրանից է կախված խորհուրդների աշխատանքի ճիշտ ընթացքը:

Դյուղացիական մասսան շահագրգռված է, վորպեսզի ամրանա Խորհրդային իշխանութիւնը: Նշանակում է, գյուղացիութիւնը շահագրգռված է, վորպեսզի ավելի լայն ընտրական իրավունքներ տրվի դիկտատուրան կողմին, Խորհրդային իշխանութիւնն ղեկավար՝ բանվոր դասակարգին:

Ինչպէս է կառուցված Խորհրդային Միութիւնն իսկ խորհրդային մեջ մտնում են 6 անկախ ցիւլիսական 2 ահ- հանրապետութիւններ:

Միութիւնը 1. ՌԽՖՍՀ — Ռուսաստանի Սոցիալիստական Ժողովրդավարական Խորհրդային Հանրապետութիւն. 2. ՌԻՍՍՀ — Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն. 3. ԱԽՍՀ — Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիս-

տական Հանրապետութիւն. 4. ԲԽՍՀ — Բելորուսիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն. 5. ՌԻՋԽՍՀ — Ուզբեկստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն. 6. ԹԽՍՀ — Թուրքմենստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն:

Տեոնենք, թե ինչպես ե պոուց ված սղ անկախ հանրապետութիւններ ից ամենախոշորը — ՌԽՖՍՀ:

(«ՌԽՖՍՀ իւր հնութան կառուցվածքը» տես զրույցի վերջում)

Միեման մեզ ցույց ե աւրիւ պետական ապարատի յուրաքանչյուր աւանձին աստիճանը, սկսած գլուխորդից մինչև Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտե:

Իճնու յե կազմվել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն Խորհրդային Միութիւններ ի Միութիւնը կազմակերպվել ե 1923 թվի հուլիսի 6-ին: Հուլիսի վեցը Խորհրդային յերկրներում բնակվող տարբեր ազգութիւնները աշխատավորութեան տոն ե հայտարարված:

«Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան ստեղծման ուրից — կարգում ենք մենք Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան կազմակերպման առթիւ հրապարա-

կած դեկլարացիայի մեջ — աշխարհիս պետութիւնները՝ բաժանվեցին յերկու բանակի՝ կապիտալիզմի բանակ ե սոցիալիզմի բանակ:

Այնտեղ, կապիտալիզմի բանակում թագաւորում ե ազգային վրեժխնդրութիւնն ու անհավասարութիւնը, գաղութային ստրկութիւնն ու շովինիզմը, ազգային հալածանքն ու ջարդերը, իմպերիալիստական վայրագութիւնն ու պատերազմները:

Այստեղ, սոցիալիզմի բանակում, իշխում ե փոխադարձ վստահութիւնն ու խաղաղութիւնը, ազգային ազատութիւնն ու հավասարութիւնը, ժողովուրդների խաղաղ կենակցութիւնն ու յեղբայրական համագործակցութիւնը»:

Խորհրդային միութիւնը մի ընտանիքում համախմբել ե մեծ յերկրի հակա տարածութեան վրա բնակվող բոլոր ազգութիւնների աշխատավորութեանը, տնտեսական շինարարութեան բնագավառում ե արտաքին թշնամիների հանդեպ միասնական ճակատով պայքարելու համար:

Միութեան գերագույն մարմիններին — Միութեան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին ու Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդին — են յենթարկված ամբողջ Միութեան շահերը շոշափող կարևորագույն խնդիրները: Այդ մարմինները Միութեան բոլոր ազգութիւնների անունից հա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԴՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
4016-84

բարերությունները մեջ են մտնում ոտաբերկրյա պետութիւնների հետ, ամբողջ ժողովրդական տնտեսութեան ընդհանուր հիմունքներն ու ծրագիրներն են սահմանում, կազմակերպում և ղեկավարում են ԽՍՀՄ ղինված ուժերը, պետական միասնական բյուջե, միասնական դրամական միավոր են սահմանում և այլն:

Պրոլետարիատի գիկ Խորհրդային Միութիւնը ԵՄՍՍՐԿԱՆ լուծել և աշխարհիս միակ յերկիրն և, ազգային հարցը վորտեղ ազգային հարցն իր ամբողջական լուծումն և ստացել: Յուրաքանչյուր ազգութիւն, ինչքան ել նա փոքրաքանակ ու հետամնաց լինի, լայն հնարավորութիւն և տրված զարգացնելու իր լեզուն, իր կուլտուրան: Այդ նպատակով ել կազմակերպված են ազգային հանրապետութիւններն ու շրջանները (область): Դեռ ավելին: Խորհրդային իշխանութիւնն ու Կոմունիստական կուսակցութիւնը նպատակ են դրել ամեն կերպ ոգնել յուրաքանչյուր հետամնաց ազգութիւն, վորպեսզի նա կուլտուրապես բարձրանա և հասնի ուս պրոլետարիատի ձեռք բերած կուլտուրական մակարդակին:

Մեզ մոտ սահմանված ազգութիւնների համագործակցութիւնն ավելի քան մեծ նշանակութիւն ունի նրա համար, վոր մեր յերկիրը բազմազգ և, վոր ցարական Ռուսաստանում վայրա-

գորեն իշխում եր ամենադաժան ազգային հալածանքը:

Հատկապես հալածանքի յենթակա ելին հրքեաները: Յարական կառավարութիւնը ազգային թշնամութիւն եր սերմանում, վորպեսզի այդ ճանապարհով աշխատավորութեան ուշադրութիւնը հեռու պահի իր իսկական թշնամիներից—բոլոր ազգութիւնների կապիտալիստներից ու կալվածատերերից: Յեվ մենք տեսնում ենք, վոր հեղափոխական շարժան յուրաքանչյուր պոռկոտան, ցարական կառավարութիւնը պատասխանում եր հրանների ջարդով:

Այդ պիւ, Լենինը իր ճառերից մեկում ասել և —.

«Յերը անիծված ցարական միապետութիւնն ապրում եր իր վերջին որերը, նա աշխատում եր թունավորել մութ ու քաղցած բանվորներին և գյուղացիներին հրեաների դեմ:

Յարական վոստիկանութիւնը դաշնակցած կապիտալիստներին ու կալվածատերերին կազմակերպում եր հրեական ջարդեր:

... Միայն բոլորովին մութ ու հետամնաց մարդիկ կարող են հավատալ հրեաների դեմ տարածվող կեղծիքին ու ամբաստանութեանը:

Հրեաները չեն բանվորների թշնամիները:

Բանվորների թշնամիները՝ բոլոր յերկրների կապիտալիստներն են:

Հրեաների մեջ կան բանվորներ—նրանք մեծամասնութիւնն են: Նրանք մեր յեղբայրներն են կապիտալի դեմ մղած պայքարում, մեր ընկերները սոցիալիզմի պայքարում»:

Խորհրդային միութեան մեջ ևս, աշխատավորական միջավայրում, ճիշտ է, դեռ մնացել են ազգային թշնամութեան հետքերը: Դա անցյալի ծանր ժառանգութիւնն է: Աշխատավորութեան կուլտուրական ու քաղաքական աճման հետ միասին կը վերանան և ազգային թշնամութեան վերջին մնացորդները:

Անցնենք այժմ խորհուրդների աշխատանքին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ԽՆԴԻՐՈՒ

Գյուղացիութեան Տնտեսական վերելքի հետ քաղաքական ակտիվութեան անկումն ու խորհուրդների աշխատանքում, գյուղացիական մասսաների քաղաքական ակտիվութիւնը: Գյուղացին ձգտում է իր քաղաքական ինքնագործունեութիւնը հրապարակ բերել: Գյուղացին, բանի գնում, ավելի մեծ չափով ձգտում է ակտիվ մասնակցել խորհրդային շինարարութեանը:

Միաժամանակ խորհուրդների աշխատանքի մեջ դեռ կան խոշոր թերութիւններ, վորոնք խանգարում են գյուղացիական մասսաներին խորհրդային շինարարութեան մեջ քաշելու գործին:

Կուսակցական ղեկավարութեան մեթոդները գյուղացիութեան նկատմամբ — մինչև մոտիկ անցիալը, մասամբ և ներկայումս, քանի վոր կուսակցութեան վորոշումներն ամենուրեք 100 տոկոսով չեն կենսագործվել — տակաւին չեն համապատասխանել գյուղացիական մասսաների նոր պահանջներին:

Խորհուրդների ընտրութիւնները կատարվել են այնպես, վոր գյուղացին փաստորեն շատ աննշան ազդեցութիւն է ունեցել թեկնածուների առաջ քաշման և նրանց ընտրութեան վրա: Կուսակցական կադմակերպութիւնները պարփակվել են իրենց մեջ: Անկուսակցական գյուղացիական մասսայի մեջ աշխատանք չի տարվել: Հետևանքն այն է յեղել, վոր կուսակցութիւնը գյուղում չի ունեցել անկուսակցական գյուղացիական ակտիվ վորը պետք է կուսակցութեան ազդեցութիւնը տարածել անկուսակցական գյուղացիութեան մասսաների վրա: Այսպիսով ստեղծվում է գյուղացիութեան նկատ-

մամբ պրոլետարական ազդեցության թուլացման վտանգը:

Այդ դրությունից ոգտվում ե, իհարկե, կուլակը: Գյուղի այդ ժամանակվա կացությունը նպաստավոր հող ե ստեղծում կուլակային ազիտացիայի համար: Միջակի համար մղվող պայքարում, վորպիսին մեր գյուղում տարվում ե բանվոր դասակարգի և կուլակության միջև, խորհրդային աշխատանքի պակասությունները գյուղում, կուլակների ձեռքին մի գենը եր իրենց ազդեցությունը միջակների վրա տարածելու գործում:

Կուլակային այդ վտանգը վերացնելու և գյուղացիության նկատմամբ պրոլետարիատի ազդեցությունն ուժեղացնելու նպատակով, կուսակցությունն առաջադրում ե խորհուրդների աշխուժացման լոզունգը: Առաջին անգամ կուսակցությունն այդ լոզունգը տվել ե Կենտրոնական Կոմիտեյի պլենումում (հոկտեմբեր, 1924 թ.), խորհուրդների աշխուժացման լոզունգն իր հետագա զարգացումը ստացել ե կուսակցության 14-րդ կոնֆերանսում և 14-րդ համագումարում:

Այժմ կիրառվում ե խորհուրդների լայն ընտրություններ: Գյուղացիական մասսային հնարավորություն ե տրվում խորհուրդներում ընտրել իր կամեցած թեկնածուներին: Գյու-

ղի կուսակցական կազմակերպությունը կարգավորում ե իր աշխատանքները, նա մեծ ուշադրությամբ պիտի հետևի գյուղացիական մասսայի պահանջներին: Այս ամենը պետք ե նպաստի խորհուրդների ու կուսակցության շուրջը շքավոր ու միջակ խավերից անկուսակցական գյուղացիական ախիվ ստեղծելուն, մի հանգամանք, վոր կարող ե կանխել կուլակային ազդեցության ուժեղացման հնարավոր վտանգը:

Իհարկե, ձեռնարկվող այդ միջոցները կուսակցության համար նոր խոշոր դժվարություններ կըստեղծեն: Գյուղում խորհրդային դեմոկրատիայի ընդլայնումը (որինակ՝ խորհրդի անդամների ընտրությունները, վոր կատարվում ե վոչ թե ցուցակով, այլ անհատական քվեարկությամբ) անպայմանորեն վորոշ հնարավորություններ ե ստեղծում կուլակային «ինքնագործունեյությունը» հրապարակ բերելու համար:

Կուլակը կարող ե այս կամ այն տեղ ոգտագործել գյուղում ծավալվող խորհրդային դեմոկրատիան: Այդ վտանգը մենք միշտ պետք ե նկատի ունենանք և կըհաղթահարենք կուսակցության կողմից կիրառվող ճիշտ քաղաքականության շնորհիվ:

1926 թվի խորհուրդների վերը ներկայացրած արդյունքները. 1926 թվի խորհուրդների վերը ներկայացրած արդյունքները. կուսակցության առաջադրած «խորհուրդների աշխուժացման» լուրջ պահանջները: Վերը ներկայացրած պետք է ցույց տային, թե բարձրացել է արդյոք, պրոլետարիատի ու նրա կուսակցության ազդեցությունը գյուղացիական մասսաների վրա, կուսակցությանը վորջանով է հաջողվել խորհուրդների աշխատանքի մեջ քաշել աշխատավորական մասսաներին և խորհրդային հունի մեջ դնել գյուղացիության ակտիվությունը, հաջողվել է արդյոք, խորհուրդների շուրջը համախմբել գյուղի չքավոր ու միջակ տարրերին և ազատիչ նրանց կուլակային ազդեցությունից: Խորհուրդների վերը ներկայացրած կամպանիայի արդյունքները վերը ներկայացրած կուսակցության կենտրոնական կոմիտեի հուլիսյան պլենումը (1926 թ.):

«Խորհուրդների վերը ներկայացրած կամպանիայի հիմնական արդյունքը կայանում է նրանում, — ասվում է պլենումի բանաձևում, — վոր այդ կամպանիան միանգամայն ապացուցեց 14-րդ կոնֆերանսում կուսակցության ընդունած քաղաքական կուրսի ճշտությունը»: Մենք դրանում կը համոզվենք, յերբ ավելի մանրամասն և առան-

ձին առանձին կը ծանոթանանք վերը ներկայացրած կամպանիայի արդյունքներին:

ԸճՏՐՈՒՄՈՒՆԵՐԻՆ Կուսակցության կողմից մասնակցողների քանակը. ընդունված խորհուրդների աշխուժացման կուրսի առաջին խոշոր նվաճումը պետք է համարել այն, վոր մեծացել է խորհուրդների վերը ներկայացրած կուսակցության մասնակցողների քանակը:

Կուսակցության վարած քաղաքականության շնորհիվ այս տարի խորհրդային շինարարության գործին մասնակից են արվել աշխատավորական նոր շերտեր: Միայն ՌՍՖՍՀ-ի մեջ վերը ներկայացրած կուսակցության մասնակցողների քանակը 17 միլիոնից բարձրացել է 19 միլիոն 500 հազարի: Սա նշանակում է կուսակցությանը հաջողվել է խորհուրդների շուրջը համախմբել աշխատավորական նոր զանգվածներ:

Նույնը նկատվում է և Խորհրդային Հայաստանում: Խորհուրդների ընտրություններին 1925 թվին մասնակցել են 144 հազար 697 հոգի, իսկ 1926 թվին, ընտրողների այդ քանակը հասել է 172 հազար 717 հոգու (19,43 տոկոսով ավելի):

ԿՍԼԱԿԸ, ՄԻՋԱԿԸ Քնչպես ասեցինք, խորհուրդների աշխուժացման հուրդների աշխուժացման քաղաքական կամպանիայում. զլխավոր խնդիրն էր — դաշինք ստեղծել չքավորի ու միջակի միջև, ընդհանուր կուլակի: Վերը ներկայացրած

կան կամպանիան ցույց տվեց, Վոր այդ խնդրի իրագործման ասպարիցում ձեռք ենք բերել վորոշ հաջողութիւններ:

Ընարութիւնների ժամանակ, հաճախ կուլակը մեծ ակտիվութիւն եր ցույց տալիս: Նա ամեն միջոց գործ եր դնում իր ազդեցութիւնը գյուղում տարածելու համար: Նա տեղ-տեղ հանդես եր գալիս չքավորութեան «պաշտպանի» դերում: Դեպքեր են յեղել, յերբ կուլակներն առաջարկել են չքավորների հարկը դնել միջակների վրա: Այսպիսով նրանք ուզում եյին չքավորներին միջակի դեմ հանել և չքավորներին իրենց ազդեցութեան տակ առնել:

Սակայն չնայած կուլակի հայտնաբերած ակտիվութեան, նրա կողմից գործ դրված միջոցներին, վերընտրական կամպանիայի ընթացքում քիչ կըլար նկատելի ազդեցութիւն չի ունեցել, ամենուրեք նա հանդիպել ե չքավորների ու միջակների միահամուռ հակահարվածին: Հատկապես մեծ ակտիվութիւն ե ցույց տվել միջակ գյուղացիութիւնը: Ընդհակառակը, չքավորն ու բատրակը, վորոնք թեպետ և այս անգամ ավելի ակտիվ եյին քան անցյալ տարի, միջակից ավելի պակաս ակտիվութիւն ցուցադրեցին:

Կուսակցութեան խորհուրդների աշխու-
ազդեցութեամբ ամ- ժացումն ընդհանրապես
րացել ե. ամրացրեց կուսակցու-
թեան ազդեցութիւնն ու հեղինակութիւնը գյու-
ղացիական մասսաների մեջ:

Տեսնենք թե ինչ են ասում թվերը.

Յուրաքանչյուր 1000 հոգուց յեղել են կուս- անդամներ	1924—25 թ.	1924—26 թ.
Նահանգային համագ.	700	64
Քաղխորհուրդներում	570	455

Այդ թվերը կարծեք թե հակասում են վերը հիշված կուսակցութեան ազդեցութեան ուժեղացման փաստին: Առաջին հայացքից այդ աչդպես ե թվում: Քաղխորհուրդներում և նահանգային համագումարներում կուսակցականների քանակի բշտնալը հետևանք ե կուսակցութեան վարած զծի: Կուսակցութիւնը նպատակ եր դրել խորհուրդների մեջ մեծ չափով տեղ տալ անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին: Մենք տեսնում ենք, վոր գյուղխորհուրդներում, գյուղացիութեան ավելի մոտ կանգնած խորհրդային այդ ստորին բջիջում, վերընտրութեան ժամանակ ավելացել ե կուսակցականների ու ու կոմյերիտականների քանակը: 1924—25 թ. գյուղխորհուրդների յուրաքանչյուր 1000 անդամներից կուսանդամներ ու կոմյերիտականներ

հեղել են 86 հոգի, իսկ այս տարի կուսակցականների ու կոմյերիտականների քանակը հասել է 101-ի:

«Վերջին վերընտրությունների հետևանքով, կուսակցության ղեկավար դերը վոչ միայն չի թուլացել, այլ ընդհակառակը, անկասկած ամրացել է (կենտկոմի պլենումի բանաձևից):

1925 թվի նկատմամբ, Խորհրդային Հայաստանում ևս, ավելացել է գյուղխորհուրդներում ընտրված կուսակցականների ու կոմյերիտականների թիվը:

1925 թվին գյուղխորհուրդների կազմի մեջ իեղել են կուսանդամներ՝ 1099 հոգի ($7,90\%$), կուսթեկնաձուներ՝ 724 ($5,20\%$), կոմյերիտականներ՝ 1252 ($9,09\%$):

1926 թվին, գյուղխորհուրդների կազմում ընտրվել են կուսանդամներ՝ 1421 հոգի ($9,99\%$), կուսթեկնաձուներ՝ 1008 ($7,80\%$) և կոմյերիտականներ՝ 1049 հոգի ($7,37\%$):

Խորհուրդների ագլաացման գծով քույրերը յեվ կուսակցական ղեկավարությամբ պակասություններ:

Խորհուրդների վերընտրական կամպանիան հատուկ խորհուրդների աշխույժացման ասպարիզում կուսակցության վարած քաղաքականության ճշտությունը: Բայց դրա հետ միասին, վերընտրու-

թյունները ցուցահանեցին խորհուրդների աշխատանքների մի շարք դժվարություններ, խորհուրդների նկատմամբ կուսակցական ղեկավարության մի շարք սլակաս կողմեր:

Լենինը միշտ սովորեցրել է կուսակցությանը—չբավականանալ ձեռք բերած հաղթություններով, այլ պարզ ու շիտակ գծել պայքարի դժվարություններն ու գործ դնել բոլոր ուժերը նրանց վերացման համար:

Մենք այժմ բավարար չենք կարող համարել ընտրություններին մասնակցած բնակչության քանակը: Բավարար չենք կարող համարել, վորովհետև 1000 ընտրողներից մինչև հիմա ընտրություններին չեն մասնակցում քաղաքում 513 հոգի, գյուղում՝ 526 հոգի: Յուրաքանչյուր 1000 կնոջից քաղաքում ընտրություններին չեն մասնակցել 619 հոգի, գյուղում՝ 713 հոգի: Միայն ՌևիՍՆ-ի մեջ, ընտրություններին չեն մասնակցել ընդամենը 24 միլիոն 601 հազար ընտրողներ:

Կուսակցությունն ու բանվոր դասակարգը բավարար չեն կարող համարել հատկապես ընտրություններին մասնակցած բանվորների տոկոսը: Ճիշտ է, բանվոր դասակարգն իր ակտիվությամբ մնում է առաջինն ամբողջ բնակչության մեջ, Բայց մինչև հիմա 100 բանվորից 45-ը չի

մասնակցում ընտրութիւններին: Բացի դրանից, չի կարելի բավարար համարել բանվորների ակտիվութեան աճումն անցյալ տարվա համեմատ: Այն ժամանակ, յերբ գյուղացիութեան ակտիվութիւնը բարձրացել է 7 տոկոսով, բանվորների ակտիվութիւնը բարձրացել է 5 տոկոսով: Խորհուրդների աշխատանքների մեջ շատ լուրջ բաց պետք է համարել բատրակների և չքավորութեան ակտիվութեան դանդաղ աճումը: Ինչպես տեսանք, գյուղի այդ խավերի ակտիվութիւնը բավականին հետ է մնում գյուղի մյուս խավերի՝ միջակների ու կուլակների ակտիվութեանից: Մասնավորապես, խորհրդային ստորին մարմիններում քչացել է չքավորութեան ներկայացուցիչների քանակը:

Չքավորն ու բատրակը — բանվոր դասակարգի հենարանն են գյուղում: Գյուղացիութեան բոլոր խավերից չքավորութիւնն ավելի մոտ է պրոլետարատին, չքավորութիւնն ավելի վրձնապես է պաշտպանում բանվոր դասակարգի դիկտատուրան: Ահա թե ինչու և «հատուկ ուշադրութիւն պիտի գարձնել բատրակներին և չքավորութեանը գյուղացիական ակտիվի մեջ գրավելու, ակտիվի այդ մասի դերն ու ազդեցութիւնն ուժեղացնելու և բատրակներին ու չքավորներին խորհուրդների, կոոպերացիայի և

այլ կազմակերպութիւնների բոլոր մարմիններում առաջ քաշելու վրա»: (Կենտկոմի պլենումի բանաձևից):

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ԲՈՒՐ- ԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Յեկու կարգեր Իր ճառերից մեկում (1919 թ. մարտին) Լենինը համեմատում է Կարմիր բանակը կապիտալիստական յերկրների բանակների հետ: Լենինը մեջ է բերում պրոլետական միապետներից մեկի խոսքերը. — «Յեթե մեր զինվորները հասկանային թե ինչու համար ենք մենք պատերազմում, ապա չեր կարելի մղել և վռչ մի պատերազմ»: Մեր Կարմիր բանակը, ընդհակառակն ուժեղ գիտակցում է, թե ինչու համար է ինքը պայքարում: Նա գիտե, վոր պաշտպանում է «իր սոցիալիստական գործը»: Լենինի այս համեմատութիւնը կարելի չէ լիովին ընդունել խորհրդային ու կապիտալիստական վողջ կարգերի նկատմամբ:

Ինչո՞վ են ուժեղ կապիտալիստական պետութիւնները: Նրանով վոր խաբում են մասսաներին, ասելով, վոր իբր թե պետութիւնը «համաժողովրդական» է, վոր իբր թե լիովին իշխում է հավասարութիւնը: Կապիտալիստական պետութիւնները թուլանում են այն չա-

փով, վոր չափով վոր կոմունիստների տարած աշխատանքների հետեանքով պարզվում է բուրժուազիայի խաբերալուծյունը, այն չափով, ինչ չափով վոր աշխատավոր մասսաներն սկսում են հասկանալ, վոր բուրժուական պետութունն իրենց հալածելու միջոց է:

Խորհրդային պետութունը, ընդհանրապես, ուժեղ է աշխատավորության գիտակցությամբ: Նա ուժեղանում է այնքան, վորքան բանվորներն ու գյուղացիները լայն չափով մասնակից են արվում իրենց պետության շինարարության գործին:

«Դեմոկրատական Ինչո՞վ բացատրել, վոր ագասուքուցներ» մինչև այսօր հաջողվում է խաբել աշխատավորության մեծ մասին: Դա զգալի չափով բացատրվում է նրանով, վոր կապիտալիստական պետութուններում գոյութուն ունեն կարծեցյալ «ազատութուններ»:

Լենինը, մեր կուսակցութունը և ամբողջ կոմունիստական Խաղաղության իրենց հիմնական անելիքներից մեկն են համարել և համարում են — մերկացնել բուրժուական պետության «դեմոկրատական ազատութունները» ելությունը: Այդ անհրաժեշտություն է, քանի վոր դեպի դեմոկրատական ազատութունը տաժած հաժարեն ուժեղ է անգամ բանվորների շրջանում,

չխոսելով արդեն գյուղացիների ու ծառայողների մասին: Այդ հավատը պաշտպանում են բուրժուազիան և բանվորական միջավայրում գործող նրա գործակալներ՝ բանվորական համաձայնողական կուսակցությունները:

«Մամուլի ազատությունը» միայն թղթի վրա գոյութուն ունի: Իրականում բոլոր թերթերի 99 տոկոսը գտնվում է բուրժուազիայի ձեռքում, վորը մամուլի միջոցով դաստիարակում է բանվորներին իր համար ցանկալի ուղղությամբ:

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ, մամուլը ծառայում է մասսաների կազմակերպման, նրանց՝ սոցիալիստական շինարարության գործին մասնակից անելու համար: Հարցը հազարավոր բան-թղթակիցներ, գյուղթղթակիցներ, մամուլի միջոցով յերևան են բերում աշխատավորների կարծիքը խորհրդային կյանքի շինարարության զանազան հարցերի վերաբերյալ:

Իսկ կապիտալիստական յերկրներում, մամուլը ծախու ձեռնարկութուն է, վոր ամեն վոք կարող է ձեռք բերել փողի միջոցով: Անգլիայում, որինակ, ամբողջ մամուլի յերեք շորորովը պատկանում է մի խոշոր կապիտալիստի — Նորտկլիֆին:

Բուրժուազիայի ձեռքին են՝ գալոցը, յե-

կեղեցիքն, բանակը, փոստիկանութիւնը: Այս ամենը բուրժուազիան ոգտագործում է, իր լուծի տակ պահելու համար աշխատավորական մասսաներին:

Բուրժուազիան յե՞րբ Բայց բուրժուազիան է հրաժարվում ազատ- հրաժարվում է և կարծեց- օտւթյունից յալ ազատութիւններից, յերբ այդ պահանջում են իր գերիշխանութիւն շահերը:

Կոմկուսակցութիւնների աշխատանքը հաշոդութիւն է ձեռք բերում: Աշխատավորական ավելի ու ավելի մեծ մասսաներ սկսում են հասկանալ բուրժուական պետութիւն էյութիւնը: Նրանք ավելի ու ավելի սկսում են հասկանալ, Վոր ազատագրվել կարելի չէ միայն «ոռասական որինակին» հետևելով:

Այդ դեպքում բուրժուազիան դադարում է հավատալ իր շահագործման ապարատի պետական մեքենայի ամրութիւնը: Նա տեսնում է, Վոր սովորական միջոցները մամուլը, չեկեղեցիքն, դպրոցը և այլն, մասսաների մեջ կորցնում են իրենց ազդեցութիւնը: Բուրժուազիան դին է շարժում բոլոր «ազատութիւնները» և ցուցահանում իր գերիշխանութիւնը, սակայն այս անգամ արդեն առանց «դեմոկրատական սքանչելիութիւնների»:

Այսպես է չեղել Իտալիայում, Իսպանիայում, Լեհաստանում, այդ կացութիւն մեջ են վենգրիան, Բուլղարիան և այլ յերկրները:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ բանվոր դասակարգը պետք է դեկտարի գյուղացիութիւնը:

2. Մեզ մոտ ո՞վ է ոգտվում ընտրական իրավունքով:

3. Ի՞նչ հանրապետութիւններ են մտնում ԽՍՀՄ մեջ:

4. Ինչո՞ւ չէ կազմակերպվել ԽՍՀՄ:

5. Ինչպիսի՞նք են ազգութիւնների վիճակը ցարական կառավարութիւն ժամանակ: Խորհրդային իշխանութիւնն ինչպես է լուծել ազգութիւնների խնդիրը:

6. Ինչո՞ւ չէ կուսակցութիւնն առաջադրել «խորհուրդների աշխուժացման» լողուններ:

7. Ի՞նչ նպատակ են հետապնդում բուրժուազիայի «դեմոկրատական ազատութիւնները»:

ՀՀ Ազգային գրադարան



NL0220376

35.115 "

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.